

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. Կոմիտաս վարդապետ եւ Մանուկ Աբեղեան. Հազար
ու մի խաղ. ժողովրդական երգարան, առաջին լիսնեակ.
Վալարշապատ 1903. էջ 70. գ. 10 կողմ:

Մեր շնորհալի երաժշտագէտ և ժողովրդական երգերի
յայտնի ձայնագրող Կոմիտաս վարդապետը՝ հմուտ բանասէր պ.
Աբեղեանի հետ միասին, մի փղեցեիկ գործ են ծրագրել. նրանք
մտադիր են հրատարակել հայ ժողովրդական երգերի մի ձոփ
ժողովածու, որի առաջին մասն է Հազար ու մի խաղի այս
լիսնեակը. կար ժամանակ, որ առհասարակ տարածուած էր այն
կարծիքը, թէ հայ ժողովուրդը բանաստեղծութիւն չունի. շատ
փաստերի հետ այս փոքրիկ ժողովածուն էլ հաստատոււմ է այդ
կարծիքի հիմնովին սխալ լինելը. Հայ ժողովուրդը միշտ ար-
տայայտել է իւր սրտի ուրախութիւնն ու վիշտը. ժողովրդական
բանաստեղծներ միշտ ունեցել ենք, միայն թէ մեր անհետա-
քրքրութեան շնորհիւ դրանք անյայտ են մնացել մեզ համար.
Եւրոպացիք էլ մեզնից տեղեկութիւն ստանալով՝ այն համոզու մն
են կայմել թէ հայ ժողովուրդը բանաստեղծութիւն չունի.

Այս փոքրիկ ժողովածուի մեջ ժողովրդական բանաստեղ-
ծութեան այնպիսի գոհարներ կան, որ պատիւ կարող են բերել
ամեն ազգի ժողովրդական բանահիւսութեան. մի՞թէ ժողովուր-
դը յանցաւոր է, երբ անկեղծ կերպով իւր զգացմունքն է ար-
տայայտոււմ, իսկ այդ զգացմունքը մեծ մասամբ վիշտ ու թա-
խիծ է. դարերի ընթացքում ժողովուրդը յուսահատուել է Աս-
տուծուն ու մարդկանց գանգատուելուց և ահա նա բնութեանն
է աղերսոււմ.

«Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր ու ջրե՛ր,
Մարմանդ-մարմանդ վաղող աղբիւրնե՛ր,

Մի վե՛ր կացէք, իմացէ՛ք,
Տեսէ՛ք իմ սըրտի ցաւերս
Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք»։— (էջ 6)

«Ա՛խ կանեմ, արուն կու գայ.
Սե սըրտիս գարո՞ւն կու գայ...
Սարերին գարուն կու գայ
Սե սըրտիս արուն կու գայ... (էջ 19)

«Ա՛յ, հեա՛, հեա՛, սի՛րտըս,
Ճընճըղկան թե ա սի՛րտըս.
Քան պուտը կարմիր չը կայ,—
Բաց անեմ՝ սե ա սի՛րտըս»։ (էջ 31)

«Քա՛մի, մի՛ տա մեր դըռան,
Սիրաս ի մըրմուռ, աչքերս ի լաց.
Ասօր նըստիմ, էնքան տի լամ,
Քարէ կարկուտ աչքերէս գայ»։

«Քա՛մի, մի՛ տա մեր դըռան,
Իմ խոցերն է շատ-
Վանայ ծով զըմէն դեղ ընի,
Զիմ դառ վէրքեր չի՛ դեղի»։ (էջ 52)

«Ահա՛ ձեզ թէ բանաստեղծութիւն, թէ գգացմունք և թէ
հոգեբանութիւն արտայայտող մրմունչներ։ Սակա՛յն».

«Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում» (էջ 1)։

2. Ե. ԵՆՊԼԻՒԾԻ. Ի՛նչ է ծշմարտութիւնը. թարգ.
Մամբրէ վարդապետ. Վաղարշապատ. 1903. 64 էջ.
գ. 10 կօպ.

Քրիստոնէական ոգուով գրուած այս գրքոյը ջատագո-
վութիւն է սուրբ գրքի. հեղինակը բացատրում է, թէ մոլո-
րութիւն է երբ մարդիկ իբրև թէ հիմնուելով մարդկային բանա-
կանութեան վրայ, չեն ընդունում ս. գրքի ճշմարտութիւնները
գործա իսկապէս ծանօթ չեն սբ. գրքի բովանդակութեանը
«Ով իրեն հաւատացող քրիստոնեայ է երևակայում և միևնոյն
ժամանակ գրագէտ է կամ կրթուած, նորա համար Ս. գրքի բո-